ՆԱԽԱԳԻԾ-Ն

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆԻ

«----» ---------2016թ. N-----Ն

ՈՐՈՇՈՒՄ

ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի
N 224-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Երևան քաղաքում տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 12-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետը, Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 29-ի N 250-Ն որոշումը և «Իրավական ակտերի մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 5-րդ մասը՝

Երևան քաղաքի ավագանին որոշում է.

1. Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի «Անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց վճար սահմանելու մասին» N224-Ն որոշման 1-ին կետը շարադրել հետևյալ նոր խմբագրությամբ.

«1. Երևան համայնքի կողմից անշարժ գույքի հասցեի տրամադրման դիմաց գանձվող վճարը սահմանել՝

1) 4-ից 6 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու դեպքում՝ 15000 ՀՀ դրամ.
2) 3 աշխատանքային օրվա ընթացքում տրամադրելու դեպքում՝ 25000 ՀՀ դրամ։»։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ-ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N224-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ Երևան համայնքի ղեկավարին է վերապահվել համայնքի տարածքում տեղակայված անշարժ գույքի հասցեավորման գործառույթը և հասցեի տրամադրման համար սահմանվել են ժամկետներ։

Հայաստանի Հանրապետության կառավարության 2016 թվականի հունվարի 29-ի N250-Ն որոշմամբ փոփոխություն է կատարվել վերոնշյալ որոշման մեջ, որի 51-րդ կետի համաձայն՝ հասցե տրամադրող լիազոր մարմնին անշարժ գույքին հասցե տրամադրելու կամ հասցե տրամադրելը մերժելու վերաբերյալ որոշում ընդունելու համար սահմանվել է առավելագույնը 6 աշխատանքային օր, ինչից ելնելով՝ անշարժ գույքի հասցեավորման համար նախկինում սահմանված 10-օրյա ժամկետը փոխարինվում է 6 աշխատանքային օրով, որի համար գանձվում է 15000 ՀՀ դրամ։

Հաշվի առնելով վերոգրյալը, առաջարկվում է սահմանված ժամկետից ավելի կարճ տևողությամբ՝ նախկինում մինչև 5 օրվա ընթացքում ժամկետը, սահմանել 3 աշխատանքային օրվա ընթացքում՝ հասցեավորման վճար գանձելով նախկինում սահմանված 25000 ՀՀ դրամը, իսկ 5-10 օրվա ընթացքում, ժամկետը փոփոխել 4-ից 6 աշխատանքային օր ժամկետով՝ հասցեավորման վճար գանձելով նախկինում սահմանված 15000 ՀՀ դրամը։

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 224-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՌՆՉՈՒԹՅԱՄԲ ԱՅԼ ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԱՆՀՐԱԺԵՇՏՈՒԹՅԱՆ ԿԱՄ ԲԱՑԱԿԱՅՈՒԹՅԱՆ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի N 224-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման առնչությամբ այլ իրավական ակտերում փոփոխություն կատարելու անհրաժեշտություն չկա։

ՏԵՂԵԿԱՆՔ

«ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ 2011 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՅԻՍԻ 6-Ի N 224-Ն ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ» ԵՐԵՎԱՆ ՔԱՂԱՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ ՈՐՈՇՄԱՆ ՆԱԽԱԳԾԻ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՊԱԿՑՈՒԹՅԱՄԲ ԵՐԵՎԱՆԻ ԲՅՈՒՋԵԻ ԵԿԱՄՈՒՏՆԵՐՈՒՄ ԵՎ ԾԱԽՍԵՐՈՒՄ ՍՊԱՍՎԵԼԻՔ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Երևան քաղաքի ավագանու «Երևան քաղաքի ավագանու 2011 թվականի մայիսի 6-ի N 224-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» որոշման նախագծի ընդունման կապակցությամբ Երևանի բյուջեում էական եկամուտների և ծախսերի փոփոխություն չի նախատեսվում:

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ Տ. ՄԱՐԳԱՐՅԱՆ